միայն Վայոց ձորով չէր սահմանափակվում. Սյունյաց



Մարաթուսում բարձրաքանդակ. **Պատկեր 13.**

Ստեփանոս յեպիսկոպոսը «զակէր Յովհաննիսի զաւագ խաչն եւ զԹիթեղնակապն եւ զկամարակապն» գրավ եր դրել «առ եպիսկոպոսի մի յԱծոպայ վանս, ի Շահապօնս, Պետրոս անուն»: Վասակը բռնաբար առնում է այդ յերեք խաչերը, ավագ խաչն ընծայում է Իվանե աթաբեկին, «եւ զերկուսն՝ զԹիթեղնակապն եւ զկամարակապն տարեալ դնէ յիւրում վանսն ի Կեչառուս ուխտի»*: Այստեղից կարելի էր յենթադրել, թե բացի Կեչառույքից Վասակի սեպհականությունը պիտի լիներ և Ածոփա վանքը, վորպես զի կարողանար յեպիսկոպոսից վերցնել գրավ դրած խաչերը: Բայց ավելի պարզ տեղեկություն ունինք այդ վանքի և ամբողջ գավառի Պռոշյանց սեպհականություն լինելու մասին այդ վանքում 1292 թվին գրված մի ավետարանի հիշատակարանից, «յիշխանութեան մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաքին և Էաչոյ (տպագրված է Խաչոյ, արտագրության կամ տպագրության սխալ է), որդւոյ և թոռին մեծին Պռոշոյ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խաղբակեանց *: Վերջապես հիշատակարանի Էաչի իշխանը 1300 թ. յուր շինել տված Խոտակերաց ս. Նշանի պահարանի արձանագրության մեջ գրում է, թե «տիրեցի հայրենի երկրիս իմո Շապունեաց և այլ յոլով գաւառաց» **:

Ըստ Օրբելյանի Շահապունիք և Ճահուկ նույն են և տասներկուերորդն է Սյունյաց գավառների մեջ[1], այսպես եր, գոնե, յուր ժամանակ. բայց ավելի իրական և նեղ մտքով Ճահուկը նույնանուն գետի հովիտն եր նույնանուն գյուղաքաղաքով, վոր այժմ Ջահրի յե կոչվում. իսկ Շահապունիք նորանից դեպի արևելահյուսիս ընկած ձորն եր, նույնանուն վտակի և նորա ճյուղերի հովիտներում, յերկուսի խառնարանից ձգվո ծ դեպի Սյունյաց (Սիսիանի) և Վայոց ձորի անջրպետ լեռները. սորա կենտրոնն եր Շահապոնք կամ ներկա կոչումով Շահբուզ բերդը լերան գլխին և նորա ստորոտում նույնանուն ավանը: Ճահուկն սկզբում Էլիկում Օրբելյանցի սեպհականությունն եր, վոր ստացել եր Ելտկուզ աթաբեկից[2]. բայց Իվանեի ձեռքով Օրբելյանց իշխանության հաստատության ժամանակ այդ գավառը նրանց սեպհականություն չտրվեցավ. Օրբելյանց պատմիչը յերկիցս հաղորդում է նորահաստատ

Խոյ, Թեխի գյուղում. **Պատկեր 14.**

իշխանության գավառները, բերդերն ու գյուղերը, և չունի յիշատակություն Ճահուկի մասին, վոր անկարելի կլիներ, յեթե նրա մաս լիներ[3]: Արձանագրու-

---

ներով (պատկ. 15): Խոյի մեջքին հետևյալ արձանագրությունը կա: Թվս ՉԺԳ (տասնավորն ու միավորը կասկածելի). Անամբն այ/ես Փուրղուլ/իս կանկնեցի զ[խ]աչս նս ! / եղբաւր իմոյ / Ճանդուլին / որ դառն սուք եթողին (s!) ի վր / մեր իշեցէք ի Ք[ս].

* Օրբ. 352:

* Արարատ. 1876. յեր. 412:

** Նույնատիպը «Գեղարուեստ» № 4. յեր. 38. տ. նաև մեր Գրչութեան Արուեստը. Գ. § 28. Տախտ. ԺԶ:

1 Օրբ. 298.

2 Օրբ. 393—395: 3 Անդ. 397. 411: